ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/06»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի նոյեմբերի 11-ին ժամը 16:19:18-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի նոյեմբերի 12-ին ժամը 15:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Ավիացիայի կարգավորումների մասին
Հարգելի գործընկերներ,
Արդյո՞ք պայմանագրի նախագիծը կազմվել է ավիացիայի մասին կարգավորումները հաշվի առնելով: Եթե ոչ, ապա հնարավո՞ր է մրցույթը հաղթելու պայմաններում փոփոխություն կատարել կնքվելիք պայմանագրում:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/06» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և հրավերի № 6 հավելվածի՝ պայմանագրի նախագծի 8-րդ կետից հետո նշված է, որ **«Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ»:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/06» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով